



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2178~~9~~  
218

362
<hr/>
17-90

1924

6892

ՌՈՒՄԱՆՀԱՅ ՈՐԲԱՆՈՑ  
ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԿԵԳՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1923--24

ՏԱՐՈՒԱՅ

—(306)—

362.  
Դ-90

ՊՈՒՐԵՆ  
ՆՈՐ ԱՐԵԱԼՈՅՍ՝ ԱՌՄԵՆԵԱՍՔԱ 15  
1924

362

Դ-90

# ՌՈՒՄԱՆՀԱՅ ՈՐԲԱՆՈՑ

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

## 1923--24

ՏԱՐՈՒԱՅ

—(106)—

ՊՈՒՐԻՆԵՇ

ՏՊԱՐԱՆ «ՆՈՐ ԱՐՇԱՆՈՅՍ» ԱՌՄԷՆԵԱՍՔԱ 15

1924

2010

2002

6892

27950-43

79

ՌՈՒՄԱՆԱՀԱՅ ՈՐԲԱՆՈՅԻ ՇՐՋ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

ՊՈՒԲՐԷՇ

Տիկին Հ. Ազատեան՝ Ատենապետուհի, Օր. Ս. Խորովեան՝ Ատենադպրուհի, Տիկնայք Փափազեան, Գարագաշեան, Բիւշիւքեան, Օր. Ա. Մանիսայեան, Օր. Բակրաճեան, Օր. Դանիէլեան, Տեարք Հրանդ Կիրակոսեան՝ գանձապետ, Տօքթ. Ա. Սալբի, Պ. Լեւոնեան, Վարդան Բարակեան, Ա. Թաթարեան:

ՊԱՔԸՈՒ

Տ. Գր. քննյ. Լազարովիչ, Տեարք Անտոն Շիթեֆընէսքու՝ Ատենապետ, Եաքոպ Գարրիլ, Գարրէլ Շիթեֆընէսքու, Բէթթրէ Կրիկորիու, Սուրէն Աղամեան, Թագւոր Արզին:

ՊԸԼՅ

Տիկին Մառի Ալաջ՝ Ատենապետուհի, Տիկին Էօժէնի Կոյրավ, Տիարք Յակոբ Մարգարօֆ, Տօնիկ Ալաջ, Բրիտտափոր Չէրնիթօֆ, Կր. Միխայիլ Օսայա:

ՊՐԱՅԻԱ

Արիս Ֆէսճեան՝ պատուակալ նախագահ, Էմմանուէլ Ռօշեան՝ գործօն ատենապետ, Ալաջ՝ ատենադպիր, Գէորգ Կարապետ՝ գանձապետ, Տօքթ. Յ. Սմարեան, Յ. Յովհաննէսեան՝ փաստարան, Գէորգ Փափազեան, Համբ. Չալքեան:

ՉԷԹԱԹԷԱ ԱԼՊԸ

Մ. Բրիտտատուրեան՝ Ատենապետ, Տ. Ե. քն. Ապրիլեան՝ փոխ-ատենապետ, Յ. Ս. Ասուատուրօֆ, Գ. Ե. Երեմեան, Խ. Մ. Թորոսով, Յ. Մ. Յարութիւնեան, Գ. Չամուրեան, Գ. Գալփաքճեան:



(2602)  
47

10860-57

**ԲՈՆՍԹԱՆՁԱ**

Ճիվան Ալթունեան՝ ատենապետ, Ա. Չտիկեան՝ փոխ-ատենապետ, Հ. քհնյ. Պետիկեան, Գ. Բէսիք-պաշեան, Գ. Տիրատու-րեան:

**ԲԻՇՆԷՎ**

Վարդան Խաչիկեան՝ ատենապետ, Տ. Մարտիրոս քհնյ. Չատիկեան՝ փոխ-ատենապետ, Կարապետ Էմիրզեան՝ դանձապետ, Թովմաս Աճէմեան՝ ատենադպիր, Գր. Աւագեանց, Ստեփան Խաչիկեան, Ստեփան Կիրիտեան:

**ՉԷՐՆՈՎԻՑ**

Պետրոս Ռոմաշքան՝ ատենապետ, Հ. Անդրէաս Լուքասիէվիչ՝ ատենադպիր, Տօքթ. Միթքէվիչ, Պօկտան Պօղօսիէվիչ, Յովսէփ Աքսէնթօվիչ, Յ. Սթէֆանօվիչ, Ն. Նէկրուզ, Բ. Այաչ, Բրիստէա Հաճի:

**ՀԸՆՁԷՇԹ**

Յ. Թոսունեանց՝ ատենապետ, Վ. Գիրգորով՝ փոխ-ատենապետ, Ս. Անտօնօֆ՝ ատենադպիր, Ս. Գիրգորով՝ դանձապետ, Ի. Օհանէսով, Կ. Մանուշակով:

**ՅՈՒՇԱՆ**

Յ. Ս. Ֆէրհատ՝ պատուակալ նախագահ, Գր. Պարոնչա՝ ատենապետ, Բրիտիա Միսիր՝ դանձապետ, Կ. Ի. Հանաճիկ՝ ատենադպիր, Տօքթ. Ա. Իպրայիլեան, Աքսէնթէ Բօրովիչի, Գր. Տիգրանեան, Վաղարշակ Յակոբեան:

**ԵԱՇ**

Տիկին Անա Տօքթ. Սօքօր՝ ատենապետուհի, Սթէֆանովիչ՝ ատենադպիր, Յ. Մկրտիչեան (հանդուցեալ), Կարապետ Վարդանեան՝ դանձապետ, Յ. Էմիրզեան:

**ՌՕՄԱՆ**

Գր. Պուրջլի՝ ատենապետ, Ղ. Փափաղեան քհն. Ս. Մանիա, Վալէրիան Կօյլավ, Բերովրէ Չաքարեան, Յար. Ալթունեան, Ա. Մարտիկեան, Տիկին Անէթա Չունթու, Տիկին Անէթա Կօյլավ, Տիկին Լիլիքա Սօյմօն, Օր. Սօֆի Պարասան, Օր. Յլօրիա Միսիր, Տիկին Ս. Պակտատեան:

**ՍԻԼԻՍՏՐԷ**

Ե. Մելիտօն՝ ատենապետ, Տ. Կէմիճեան՝ փոխ ատենապետ, Պ. Պետիկեան՝ դանձապետ, Ս. Արապաճեան, Գալուստ Անտոնեան, Գ. Կարապետեան, Ս. Փափաղեան:

**ՍՈՒՉՈՎԱ**

Տիկին Օլկա Փօն Բրուեքուլ՝ ատենապետուհի, Կ. Կայինա, Գնէլ քհնյ. Մանտայեան:

**ՊՕԹՕՇԱՆ**

Տ. Գր. Կօյլավ՝ ատենապետ:

**ԿԱԼԱՑ**

Տ: Յար. Սրէնճեան՝ Ատենապետ:

**ՊԱԶԱՐՂԸՔ**

Տեարք Հայկ Հաճի Գարրիէլեան՝ Գանձապետ, Նիկողոս Սիսակեան՝ ատենապետ, Լեւոն Պօղոսեան, Սարգիս Պետրոսեան, Մուրատ Խաչատրեան, Միսակ Կուտուղեան, Մահակ Ճինիվիլեան, Մահակ Ճինիվիլեան, Միհրան Կիւլեան, Կարապետ Լայէեան՝ ատենադպիր:

**ՊԱՂԸՔ**

Տեարք՝ Գարեգին Աւագեան, Աչոտ Պօղոսեան և Գրիգոր Մինակեօղեան:

# ՌՌԻՄԱՆԱՀԱՅ ՈՐԲԱՆՈՑ

ՀԱՍԱՐՈՏՈՒՌԻՒՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
1923—24 ՏԱՐՈՒԱՅ

Տեարք,

Ներկայ տարւոյ Ապրիլին, Որբանոցիս հաստատման անդրանիկ տարին լրանալով, Կեդր. վարչութիւնըս պատիւ ունի իր հաշուետուութիւնը մատուցանել որբանոցիս պաշտպաններուն եւ նուիրատուներուն Ընդհ. ժողովին, ցոյց տալով, միանգամայն, հաստատութեանս նիւթական ու բարոյական կացութիւնը անցեան տարւոյ ընթացքին մէջ, այն է 1923 Ապրիլին մինչեւ 1924 Մարտ 31:

Որբանոցը բացինք անսպով մեր եզրայրասիրական ու մարդասիրական զգացումներուն ձայնին: Հայ աշխարհի արիւնտտ զէպքերուն հետեւանքով, այնքան աճաղին էր երեսի վրայ մնացող որբերուն թիւը, որ Ռուսականացութիւնը թերացած պիտի ըլլար իր ամէնէն նուիրական պարտականութիւններէն մէկուն զէմ՝ եթէ իր բաժինը չկտար որբախնամ գործին: Արդէն՝ ինչպէս ծանօթ է ձեզ, 1921 թուականին Պուքրէշի մէջ ծնունդ առած էր Որբախնամը, որ ժամանակ մը օգնեց է. Պոլսոյ մէջ հաստատած որբանոցներուն, կարեւոր քանակութեամբ անդեղեղէն հասցնելով անոնց Ազդ. Պատրիարքարանի

միջոցով եւ Ռուսական բարձր կառավարութեան հաւանութիւնով:

Բայց, անցեալ տարի, նոր ու անակնկալ դէպքեր դարձեալ եկան պղտորել հանգիստը հէզ որբերուն, որոնք հազիւ շունչ առնել սկսած էին Կ. Պոլսոյ մէջ: Այնպէս որ դաշնակիցներուն հեռանալէն քիչ առաջ, Կ. Պոլսոյ որբերուն մեծագոյն մասը Յունաստան փոխադրուեցան:

Մնացած էին, սակայն մայրաքաղաքին շրջակայքը, բազմաթիւ որբեր, որոնք կը քաշքշէին իրենց կեանքը կապան յորջորջուած թշուառութեան բոցներուն մէջ: Կ. Պոլսոյ որբախնամ գործը փճացած էր գրեթէ: Եւ այդ տաղնապալի պահուն էր որ, Պուքրէշի Որբախնամը, շարունակելու համար իր գործունէութիւնը, իր պատուիրակին միջոցաւ եւ Ռուսիոյ կառավարութեան թոյլտուութիւնով Ռուսմանիա փոխադրեց 150 որբեր եւ 50 սրբունիներ, որոնք կաշաններու մէջ լքուած՝ ստոյգ կորուստի մատնուած էին:

Այս 200 որբերուն Ռուսմանիա ժամանելէն ետքը, Պուքրէշի որբախնամը լուծուելով, տեղի տուաւ Ռուսմանահայ Որբանոցի Կեդր. վարչութեան, որուն յանձնեց նաեւ 573, 272, 60 լէյի գումարը:

Այս է, ահա, համառօտիւ, հաստատութեանս շարժառիթը որ, ինչպէս գիտէք, հետեւանքն է կարգ մը ծանր եւ ողբերգական պարագաներու:

Որբանոցին շէնքը:— Դժուարութիւններուն ամէնէն մեծերէն մէկը յարմար տեղ մը գտնելն էր որբանոցին համար: Կեդրոններու մէջ տրամադրելի ընդարձակ չէնքեր չիկային: Եւ երբ որբերը մեկնելու վրայ էին Կ. Պոլսէն, Ռուսմանիա անցնելու համար, տակաւին անոնց բնակարանը պատրաստ չէր այս տեղ: Միւս կողմէ ժամանակը կարճ էր եւ չէինք

կրնար որբերուն փոխադրութիւնը ուշացնել, այնպիսի պարագաներու բերմունքով, որոնց վրայ չպիտի ծանրանանք այստեղ, փափաքելով մնալ մեր շատ բարեգործական դերին մէջ: Բարեբախտաբար վերջին պահուն, յաջողեցանք վարձել Սթրուենկայի արտի շէնքը, որ կը բաղկանայ գլխաւոր ու ընդարձակ բաժինէ մը եւ ուրիշ երեք երկրորդական տուներէ: Սթրուենկա թէեւ Պուքրէշէ բաւական հեռու, Ռոմանի, Եաշի, Պօթօչանի, Պաքըուի, Ֆօքչանի Սուչովայի եւ ուրիշ հայաբնակ կեդրոններու մօտիկ ըլլալու առաւելութիւնը ունի: Ասկէց զատ՝ շէնքին յատուկ ընդարձակ պարտէզները, ծառաստանները, մօտակայ սօսիի անտառները, մաքուր օդը, եւ առատ ու սքանչելի ջուրը, բոլորովին յարմար կընէին զայն որբանոցին համար, նամանաւանդ առողջական տեսակէտով:

Մեր 200 որբերուն Սթրուենկա ժամանումը մեծ համակրանքի ցոյցերով ընդունուեցաւ Թրկու-Ֆուրմօսի եւ Սթուենկա գիւղին բարի բնակիչներուն կողմէն: Անոնք զիմաւորուեցան Ռուսիոյ գաղտնի որբերէն ծաղիկներով, երգերով ու քաջալերական ու բարի գալուստի խօսքերով, ընդունելութիւն որ մինչեւ արտասուք շարժեց մեր որբիկներուն եւ իրենց ուսուցիչներուն սրտերը:

Առողջական Վիճակ.— Կեդր. վարչութեան ինչպէս նաեւ որբանոցի տնօրէնութեան, որ յանձնուեցաւ կարող ու փորձառու գաստիարակի մը, Տիար Ս. Սրենչին, մեծագոյն մտադրազուլմն էր որբերու առողջական վիճակը: Առանց բռնուած ըլլալու ներքին հիւանդութիւններէ, որբերը մեծ մասամբ կը տառապէին թշուառութեան յատուկ տարափոխիկ ախտերէ, ինչպէս են՝ բորոտութիւն, գոնջ

աչքի ցաւ եւն: Բարեբախտաբար բժշկական գործին գլուխը կը զանուէր Տօքթ. Տէր Ստեփանեանի պէս անձնաւորութիւն մը, որ ջանք ու աշխատութիւն չխնայեց հաստատութիւնը առողջապահական գոհացուցիչ պայմաններու մէջ դնելու համար: Կեդր. վարչութիւնս ևս, իր կողմէն, ո՛րէ է զոհողութիւն-չխնայեց ժամ առաջ հիւանդութեանց առաջըը առնելու համար: Կատարեալ մաքրութեամբ, օրական յոգանքներով, հիւանդանոցով մը որոնց մէջ զետեղուեցան ամէնէն ծանրերը, վերջապէս բժշկական հարկ եղած խնամքներով, կարելի եղաւ տղաքը ազատել զագրելի ախտերէն: Այսպէսով, անցեալ Օգոստոսին, հաստատութեան պաշտօնական բացման հանդէսին առթիւ, ներկաները տեսան թէ ո՛րքան կայտառ ու առողջ են մեր որբերը: Անոնց դէմքերը, որոնք 4 ամիսներ առաջ տառապանքի խոր հետքերը կը կրէին, այժմ լեցուն ու վարդագոյն էին դարցած: Այդ դէմքերուն վրայ կը ծաղէր վերջապէս ժպիտը որ կը բղխի գոհունակութենէ: Երախաները գոհ էին մէկտեղ ապրելով, ու մեծնալով, հայրական խնամք ընդունելով, կրթուելով ու դաստիարակուելով եւ ծծելով ազատութեան օդը, ծաղիկներով ու դալարով լի դաշտերուն մէջ, պայծառ ու կազդուրիչ լոյսի հեղեղներուն տակ:

Դպրոցը.— Որբանոցի դպրոցին յատկացուած է շէնքերէն մին՝ որուն մէջ նորոգութիւններ և փոփոխութիւններ մտցուցած ենք նպատակին ծառայեցնելու համար: Առայժմ ունինք, միայն նախակրթաբանական չորս կարգերը: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան կրթական նախարարութենէ վաւերացուած ծրագրով: Դպրոցական պիտոյքները, որոնք վարժարանին բացուած օրը բոլորովին կը պակսէին:

տակաւ առ տակաւ կազմուելու վրայ են: Ռուսմաներէն լեզուին մեծ հողածութիւն կը տրուի: Աշակերտները թէեւ բազմամարդ կեդրոնէ հետու, արդէն ըսկասած են խօսիլ երկրիս լեզուն:

Նիւթական միջոցներուն անբաւականութեան պատճառով, Կեդր. Վարչութիւնս ի վիճակի չեղաւ մինչեւ հիմա իրագործելու արհեստանոցի մը բացման ծրագիրը: Ներկայիս ունինք միայն տարրական արհեստանոց մը, ուր տղայք զրօսանքի ժամերուն կը զբաղին երկաթագործութեամբ, կօշկակարութեամբ և ատաղձագործութեամբ: Աղջիկները կ'ուսանին կար, ձեւագիտութիւն և պրօսէրի:

Որբանոցին մէջ կը տիրէ պօյսքաութեան կազմակերպութիւն: Անցեալ տարւայ մէջ մարմնամարզութեան դասերը տուած է Օր. Արմինէ Սրենց, վկայեալ մասնագէտ, հիանալի արդիւնքներ ձեռք բերելով, ինչպէս տեսանք որբանոցի բացման հանդեպին առթիւ եղած փորձերէն: Աշակերտութեան հոգեկան զարգացման համար, չեն անտեսուած նաեւ երաժշտութիւնը և գրական ու բանաստեղծական գրուցատրութիւնները և զժազրութիւնը:

Ներկայ տարւոյ մէջ, Կեդր. Վարչութիւնս ջանք չպիտի խնայէ կանոնաւոր արհեստանոց ըը բտնալու համար որբանոցին մէջ, որպէսզի իւրաքանչիւր աշակերտ արհեստ մը սորվելով, ապահովէ իր ապրուստի միջոցը ապագայի մէջ: Ժողովիդ ուշադրութեանը կը հրաւիրենք այս կենսական խնդրին վրայ որ, եթէ յաջողութեամբ լուծուի, մեծ արդիւնքներ առաջ պիտի բերէ: Նոյն իսկ, արհեստանոցին արտադրութիւնները ի վաճառ հանելով, կարճ ատենի մէջ պիտի կրնանք թեթեւցնել մեր ծախքերը:

Պաշտօնէւէթիւն. — Տարեշրջանիս վերջերը, պաշտօնէութեան մէջ քանի մը փոփոխութիւններ

տեղի ունեցան: Տօքթ. Տէր Ստեփանեան երկրէս հեռանալով, իրեն տեղը հրաւիրուեցաւ Թրկու-Ֆրուսօղի քաղաքապետական բժիշկը, իրրեւ այցելու բժիշկ: Ասկէց զատ, հասարակութեան մէջ ունինք փորձառու և վկայեալ մնայուն հիւանդապահուհի մը: Ամբողջ պաշտօնէութեան ամսական թոշակները կը հասնին շուրջ 22,500 լէյի: Այս փոփոխութիւնները տեղի չունեցած թոշակներու գումարն էր ամսական 32 հազար լէյ:

Որբանոցը ունի տնօրէն մը, փոխ-տնօրէն մը, վեց ուսուցիչ և ուսուցչուհիներ, մէկ կարուհի, մէկ հանդերձապահուհի, մէկ մատակարար, մէկ հիւանդապահուհի, մէկ խոհարար, մէկ պարտիզպան, մէկ կառուպան և մէկ սպասաւոր, ընդամէնը 18 հոգի: Ուսուցիչներէն մին հաշուակալի ու մատանապետի գործն ալ առած է իր վրան:

Որբանոցէն դուրս տրուած որբերը. — Նկատելով որ որբերէն ոմանք իրենց տարիքին բերմունքով անյարմար էին նախակրթարանական ուսման, Կեդր. Վարչութիւնս 25 որբեր յանձնեց երկրին զանազան քաղաքներուն մէջ դասուող հայ ընտանիքներու փնամքին, պարտականութիւն դնելով ասոնց վրայ զանոնք գաստիարակել ու կրթել բուն իսկ իրենց հարազատ զաւակներուն պէս: Մեր տեղական մասնաձեւերը, որոնք ստանձնած են սոյն որբերուն վերին հսկողութիւնը, մեզ կը տեղեկագրեն թէ այդ տղաքներուն վիճակը յոյժ գահացուցիչ է: Անոնցմէ մէկ քանին արդէն որդեգրուած են իրենց պաշտպան ունեւոր ընտանիքներուն կողմէ: Բաւական է ըսել թէ այդ որբերէն ու որբուհիներէն հինգը կ'ապրին Պաքըու, ծանօթ բարերարուհի ագն, տիկին Հեղինէ Ա. ԵթէՖընէսքուի տան մէջ:

Պիտեէն. — Որբանոցիս բացման ատեն՝ Կեղր-Վարչութիւնս տարեկան պիւտճէն գնահատած էր մէկ ու կէս միլիոն լէյ, 20ական լէյ հաշուելով իւրաքանչիւր որբի օրական ծախքը:

Բայց այս հաշիւը չհամապատասխանեց իրականութեան, որովհետեւ մէկ կողմէ երեւան կլան նորոգութեանց և նորանոր բաժիններու շինութիւնը, իսկ միւս կողմէ՝ ուտեստեղէններու գները զգալապէս բարձրացան:

Նորոգութեանց համար ծախսեցինք 247,684.90 լէյի գումարը, որուն մէջ կը մտնէ նաև բազանիքի շինութիւնը:

Ուտեստիքի ծախսուեցաւ 645,751 լէյ, առանց հաշուելու պարտեղին բերքերը, ինչպէս նաև Որբանոց զրկուած ուտեստեղէնները, որոնց արժէքը մօտաւորապէս կը հասնի 70,000 լէյի: (Սոյն գումարին մէջ չեն մտներ Որբերու ամիսին առթիւ հաւաքուած նպարեղէններու արժէքը որ կը պատկանի յաջորդ տարուայ հաշիւներուն): Անցեալ տարուայ ընթացքին մէջ Որբանոցին ուտեստեղէն և այլն, զըրկողներուն շարքին մէջ առաջին տեղը կը զբաւէ Ա.գն. Տիկին Նէվրուզ խան, Ռօման քաղաքէն:

Պուրբշի Թախքերու մէջ կը մտնեն Որբանոցին վարձքը, Կեղր, Վարչութեան և Մասնաձեռնողներուն կնիքները ու տպագրական պիտոյքներու ծախքերը, թղթատար ու հեռագիր, Կեղր, Վարչութեան ձեռքով գնուած զանազան ապրանքները, իսկ Կթրուսկայի Թախքի ըսելով կ'իմացուի Տնօրէնութեան ընդհ. ծախքերը որոնք տեղի ունեցած են վաւերաթուղթերու հիման վրայ:

Ճանապարհածախսի հաշիւը կը պարունակէ որբերու փոխադրութեան ծախքը, վերջերս պ. Տնօրէնին երկրին մէջ ըրած պտոյտին ձանապարհածախսը

և ուրիշ երթեւեկի ծախսեր կազմակերպական ու մատակարարութեան պէտքերու համար: Թողակներուն գումարը կը պարունակէ նաև գործաւորական ուժերիներու մէկ մասը: Պարտիզպանութեան համար յատկացուած է 17,832 լէյի գումարը, ձեռք բերուելով գոհացուցիչ բերք մը, Ներկայ տարուայ մէջ, մեծ մղում տրուած է պարտեղներու մշակութեան գործին և կը յուսանք կարեւոր խնայողութիւն մը ընել ուտեստեղէնի հաշուին մէջ: Նոյնպէս, Կառ-Կարասիներու համար ծախսուած է 350,000 լէյ, որոնք կը կազմեն մեր պատրաստի գոյքերուն մէկ մասը: Ունինք նաև 40 խողերով խողանոց մը, հաւնոց և 2 ձիեր:

Միւս ծախքերը կարելի է տեսնել քննելով յարակից հաշուետուութիւնը:

Մուտք. — Մինչև անցեալ մարտի 31-ին, Որբանոցիս ընդհ. մուտքը եղած է 2,356,984.30 լէյ, որուն մէջ կը մտնէ նաև 573,272.60 լէյ գումարը, որ մնացած է նախորդ Որբախնամէն:

Մուտքերը առաջ եկած են՝

ա) Որբերու պաշտպաններէն, որոնց թիւը կը հասնի 103ի և որոնք կը վճարեն տարեկան 7000-ական լէյ իրենց պաշտպանութեան տակ գտնուող որբերուն համար:

բ) Ամսավճարներէ:

գ) Դիպուածական նուիրատուութիւններէ ու հանդէսներէ:

Կեղր, Վարչութիւնս իր ծանր բեռը կրցած է տանիլ շնորհիւ մասնաձեռնողներու թանկագին աջակցութեան: Մասնաձեռնողները կազմող անձնաւորութիւններուն ազնիւ զգացումները և Որբանոցիս բարօրութեան համար պարզած աշխատութիւնը ամէն գովեստէ գեր ի վեր են:

Մասնաճիւղերը, մինչև 1924 մարտ 31-ի օրը, մեզ զրկած են՝

Քոնսումանձա 274,336 լէյ, Կալաց 275,741 լէյ, Պուքրէշ 135,000 լէյ, Ուլիստրէ 52,000 Ռուբան 22182, Պաքու 22,200, Պրայիլա 33 082 լէյ, Եաշ 30 697 լէյ, Ֆօքշան 35 690, Սուլուվա 10,600, Պուժուշան 22,360, Չեթաթէ-Սլայլ 25000, Չերնովից 9700 լէյ, Փիշնէվ 19,608, Հրոչէշ 5060, Պուլց 7815 լէյ:

Նշանակելի է թէ՛ Պուքրէշի, Պրայիլայի և ուրիշ քանի մը տեղերու մասնաճիւղերը նոր կազմուած են:

Ասկէց զատ հետեւեալ գումարները ստացած ենք այն քաղաքներէն, ուր մնայուն մասնաճիւղեր չունինք այլ միայն թղթակիցներ:

Պուգրու 2060, Բանյու 1660, Վաուուլ 1500, Պրուլատ 10000, Ֆրուիլիչէն 9700, Պապատաղ 740, Բապարնըք 2000, Բիւսթրա 5100, Գրայուվա 22 150:

Համագումար 1,030,950 լէյ:

Մնացեալ մուտքերը գոյացած են Որբանոցի Տնօրէնութեան զրկուած փոքր նուէրներէն, բացման հանդէսին ստիւլ ստացուած նուէրներէն, Հ. Հ. Ընդհ. Հիւպատոսարանէն ստացուած 25,000 լէյի գումարէն, Պուքրէշի մէջ, տեղական Մասնաճիւղին ստեղծուելէն առաջ Կեդր. Վարչութեանս կողմէ գանձուած ամսավճարներէն, վերջապէս օտար դրամատուէններէն ու առեւտրական ընկերութիւններէն: Ասոնց զլուխը կը գտնուի Ռումանիոյ Ազգային Պանքան որ նուիրած է 50,000 լէյ: Նուիրած են նաև Մարմարօշ Պանք դրամատուէր 25,000, Պուքրէշի Առեւտրական Սենեակը 25,000, Բէթրօլ Մինա 21,000, Պանքա Ռումանեաքը 15,000, Պանքա տէ Բրէտիթ Ռօմըն և Էմպրիքոս և Ընկ. 10,000-ական, Բրիտովանի և Չէրէպիլատներու դրամատուէնները 7000-ա-

կան, Տաչիա Ռօմանիա, Նացիօնալա, Ակրիբօլա ապահովագրական ընկերութիւնները, Երկրագործական Պանքան, Տրէչֆուս և Ընկ., Գ. Քոնսթանթինէսքու, Սիկֆրիտ Լէօպէլ, Առեւտրական ու ձեռաբուստի և Ռումէն-իտալական պանքաները 5000-ական, Սօչէք, Պանքա Եայօմիցա, Պանքա Մօրարիօր 3000 ական, Ֆրանքօ-Ռումէն, Լազարիս և Նէկրօրօնիթէ դրամատուէնները և Ռօլլէր եղբայրները 2000-ական լէյ:

Կնքելով մեր այս հակիրճ տեղեկագիրը, նուիրական պարտականութիւն կը սեպենք մեզ՝ մեր երախտագիտական խորին զգացումները ու ջերմագին շնորհակալիքը յայտնել Ն. Վ. Ֆէրտինանտ Ա. Թագաւորին բարձր կառավարութեան, որ ամէն զիւրութիւն նուիրած է մեզ, Որբանոցիս բացման առթիւ անգամ մըն ալ ապացուցանելով իր համակրական վերաբերմունքը հանդէպ մեր բազմաչարչար ազգին և հանդէպ որբուկներուն անոնց, որոնք իրենց կեանքերը զոհած են զաշնակիցներու և Ռումանիոյ յաղթանակին համար, բոլոր դրամատուէններուն և Ընկերութիւններուն, վեհանձն պաշտպաններուն ու մեծ ու փոքր նուիրատուներուն և Հայ Տիկնանց Կարմիր Ոսպի Ընկերութեան, որոնք, իրենց լուծանքով օգնած են մեզ, թշուառութեան ճիրաններէն ու ստոյգ կորուստէ փրկելու 200 հայ անմեղ որբուկներ:

Շնորհակալութիւն կը յայտնենք նաև երեսփոխան Տիար Մանօլէսքու Աթրունկայի, Որբանոցիս բարի զբաղին ու կալուածատէրը, որ առաջին օրէն իսկ մեծ համակրանք ցոյց տուած է մեր որբերուն և պաշտպան հանդիսացած է հաստատութեան:

Շնորհակալութիւն նաև «Նոր-Արշալոյս»-ի խրմբադրութեան, հաստատութեանս իր նուիրած լայն աջակցութեան համար:

Եւ անա այս կերպով, ձեր շնորհիւ, որ պաշտպանեցիք Ռուսականայ Որրանոցը, մտնկանց այն դժխեմ գերեզմաննոցին տեղ որ պիտի տարածուէր Սեւ Մովու ալիքներէն ծեծուած լերկ փերուուն վրայ, ծագեցաւ Սթրուենկայի գիւղին քով, գեղածիծաղ պարտէզ մը, ուր կ'ապրին ու կը մեծնան երէկի խեղճ ու լքուած մեր զաւակները և որ մեծ ու փայլուն ապագայ մը կը խոստանայ:

Կեդր. Վարչութիւնս աներկրայ է որ, հայ հասարակութիւնը պիտի շարունակէ իր աջակցութիւնը նուիրել հաստատութեանս, որ ամէնէն նուիրականն է գաղութիւս մէջ, և թէ ամէնքը, իրենց կարողութեան սահմանին մէջ զօրավիզ պիտի հանդիսանան անոր:

Եւ սոյն անդրդուելի հաւատքով, կը թեւակրխենք Ռուսականայ Որրանոցի գոյութեան Բ. տարեշրջանին մէջ:

Կեդր. Վարչութիւն Ռուսականայ Որրանոցի  
Նախագահ

Ա. ՄԱՆԻՍԱԿԵԱՆ

Անդամք՝ Յ. Բարակեան, Ա. Ազատեան,  
Տօքթ. Ս. Սարի, Օ. Բակրաճեան:

Իրանոն.— Տարւոյս ընթացքին մէջ հրաժարած են Կեդր. Վարչութիւնէս, իրենց անձնական զբաղմանց պատճառով, Տեաք Թերզեան, Սիմօն Բէհեան և Դ. Դանիէլեան, որոնց մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք, պաշտօնի վրայ եղած առանձին հաստատութեանս մատուցած իանկազին ծառայութեանց համար:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՅՁՈՒԵԿՂԻՌ**

ԿՆՔՈՒԱԾ 1924 ՄԱՐՏ 31-ԻՆ

**ՊԱՀԱՆՁԻ**

Սնտուկ		
Պատրաստ դրամ	15.675	75
Կարասիք	260.811	35
<b>Ս. Սրենց</b>		
Մարտ 31-ին մնացած հաշիւը	21.000	15
Փոխանցելի	1000	—
Անասուններու փոխարժէքը	69.500	—
Երաշխաւորութիւն	2000	—
Անկողինի կազմածներ	55.055	25
Հազուատեղէն	150.000	—
	575.042	50

**ՊԱՐՏԻ**

Նուիրատուութիւններ	180.651	50
Մանիապեան եղբարք	22.545	—
Մանասէ, Կրօս չուխայի գործարանին	70.000	—
Վիլի Տիներման	100.000	—
Զանազան պարտատէրներու	201.846	—
	575.042	50

Նախագահ Որրանոցին Գանձապետ Համարակալ  
Ա. Մանրսալեան Գ. Բարակեան Թ. Էնաքէ

Հաշուեքներէ Յանձնախումբ

Գէորգ Հաճի Արմինեան Գէորգ Քէտտանեան  
Վահէ Զուլեան

10860-54  
75-09801



# ՄՈՒՏՔԵՐՈՒ ԵՒ ԺԱՆՔԵՐՈՒ ՀԱՅԻՉ

ՄԻՆՁԵՒ 31 ՄԱՐՏ 1924

ԵԼՔ

Գեղը. վարչ. ծախքերը Պուրբէշի մէջ	141.519	15
Որրանոցին ընդհ. ծախքերը	112.536	55
Թուշակ	405.589	—
Հազուատեղէններ	346.431	—
Նորոգութեանց	247.684	90
Ճանապարհածախս	90.528	35
Հուաքիչին	80.000	—
Գպրոցական պիտոյք	16.642	50
Մնուէղ	645.751	15
Լուացարան	25.299	75
Լոյս և վառելիքի	59.884	70
Թղթատար և հեռագիր	3716	75
Դեղերու	10.703	—
Ձիերու կեր	7825	—
Պարտիզպանութիւն	17.832	—
Կօչկակարական գործիք	44	—
Ձեռագործի	671	50
Չգործածուած նուիրատուութիւններ ու յանք փոխանցուած են յաջորդ տարւայ	180.651	50
	<u>2381864</u>	<u>80</u>

## ՄՈՒՏՔ

Ընդհանուր մուտք	2.356.984	30
Նորանոցին աճելը	24.880	50
	<u>2.381.864</u>	<u>80</u>

Նախ. Որրանոցին Գանձապահ Համարակալ  
Ա. Մանթապեան Գ. Բարակեան Թ. Կնաքէ

Հաշուեքները Յանձնախումբ

Գեորգ Հանր Սրժնիսեան Գեորգ Քլատանեան  
Վանէ Չուլճեան

2013

2/7B

«Ազգային գրադարան»



NL0049814



